ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Աստղիկ Մարաբյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ մշակույթի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետի պաշտոնակատար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

ք. Լյուքսեմբուրգ (Լյուքսեմբուրգի դքսություն)

2019 թվականի ապրիլի 9-11

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Մշակութային ուղիների եվրոպական ինստիտուտ

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Եվրոպայի խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի հերթական հանդիպմանը

Մշակութային ուղիների եվրոպական ինստիտուտի տնօրեն Ստեֆանո Դոմինիոնիի հրավերով ս. թ. ապրիլի 9-11-ը գործուղվել էի ք. Լյուքսեմբուրգ (Լյուքսեմբուրգի դքսություն)՝ մասնակցելու Եվրոպայի խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի հերթական հանդիպմանը:

Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիներ ծրագիրը մեկնարկել է 1987 թ.: Ծրագրի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է Եվրոպայի տարբեր երկրների մշակութային ժառանգությունը նպաստում ընդհանուր մշակութային ժառանգությանը: Հայաստանը 2015 թ. ապրիլի 1-ից հանդիսանում է Մշակութային ուղիներ ընդլայնված համաձայնագրի լիիրավ անդամ: 2019 թ. Հայաստանն առաջին անգամ էր մասնակցում

Մշակութային ուղիների ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի հանդիպմանը:

2019 թ. ապրիլի 10-ին տեղի ունեցավ Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի նիստի բացումը և օրակարգի ընդունումը, որի հիմնական թեմաներն էին 2018 թվականի հաշվետվության ներկայացումը և 2019 թվականի ծրագրի նախագծի քննարկումը: Տեղի ունեցավ «Եվրոպական խորհրդի մշակութային ուղիների» 8 նոր հայտերի ներկայացումը և քննարկումը (այդ թվում՝ Երկաթե վարագույրի ուղին, Ռեֆորմացիայի ուղին, Արդյունաբերության ժառանգության եվրոպական ուղին, Խաղաղության վայրեր, Եվրոպական մանկավարժության ուղին, լե Կորբուզիեի նշանակետեր և այլն). խորհրդի որոշմամբ 6 հայտ ստացան «Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիների» հավաստագիր: Առաջին օրվա ավարտին քննարկվեց նաև սույն թվականի հոկտեմբերի 2-4 Ռումինիայում կազմակերպվող Խորհրդատվական ֆորումի ոչ պաշտոնական հանդիպման մանրամասները:

2019 թ. ապրիլի 11-ին տեղի ունեցավ կառավարման խորհրդի հանդիպման շարունակությունը: Նիստը մեկնարկեց կառավարման խորհրդի նոր նախագահի և փոխնախագահի, ինչպես նաև բյուրոյի նոր անդամների ընտրությամբ, որի արդյունքում նոր նախագահ ընտրվեց Գերմանիայի ներկայացուցիչը, փոխնախագահ՝ Վրաստանի ներկայացուցիչը, իսկ բյուրոյի նոր անդամներ՝ Հունաստանի և Շվեյցարիայի ներկայացուցիչները:

Հաջորդիվ կառավարման խորհուրդը անցկացրեց 10 «Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիների» հերթական վերագնահատումը (այդ թվում՝ Ձիթենու ուղին, Վիկինգների ուղին, Հրեական ժառանգության եվրոպական ուղին, Նապոլեոնի ուղին, Ռոմանական կայսրերի և Դանուբի գինեգործության ուղին և այլն), որի արդյունքում 9 «ուղիներ» վերահավաստագրվեցին, իսկ մեկ «ուղու» հետ կապված որոշում կայացվեց պահանջել նոր հաշվետվություն:

Հաջորդիվ Վրաստանի ներկայացուցիչը ներկայացրեց հաշվետվություն ծրագրի շրջանակներում Վրաստանում անցկացված «մշակութային ուղիների » քարտեզագրման արդյունքների և մարտահրավերների մասին, քննարկվեց նաև այլ երկրներում քարտեզագրում անելու հնարավորությունները:

Երկօրյա հանդիպումն ավարտվեց 2017-2020 թթ Եվրոպական խորհրդի և Եվրոմիության համատեղ /Routes4u/ հարթակի ներկայացմանբ:

Հաշվի առնելով, որ 2015 թ. անդամություն ստանալուց հետո Հայաստանը առաջին անգամ էր մասնակցում Եվրոպայի խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի հանդիպմանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանը 33 «Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիներ»-ում ներկայացված է ընդամենը մեկ ուղում (Iter Vitis Route՝ գինու և գինեգործության ուղի), նիստի շրջանակներում ակտիվորեն ներգրավված եմ եղել ծանոթությունների հաստատմամբ, Հայաստանի դերի և նոր ուղիներում Հայաստանի ներգրավվածությունն ապահովելու հնարավորությունների քննարկմամբ: Մշակութային ուղիների եվրոպական ինստիտուտի տնօրեն Ստեֆանո Դոմինիոնիի հետ քննարկել ենք Հայաստանի կողմից մշակութային ուղի ներկայացնելու, Հայաստանում մշակութային ուղիների քարտեզագրում անցկացնելու և Խորհրդատվական ֆորումի ոչ պաշտոնական հանդիպումը Հայաստանում կազմակերպելու հնարավորությունները:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Ապահովվեց Հայաստանի պաշտոնական մասնակցությունը Եվրոպական խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի հանդիպմանը
2. Եվրոպական խորհրդի մշակութային ուղիների ծրագրում Հայաստանի դերի ակտիվացում և նոր մշակութային ուղիներում ներգրավվածության հնարավորությունների դիտարկում
3. Հանդիպումներ Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի անդամ պետությունների ներկայացուցիչների հետ, որոնց հիմնական նպատակը փորձի փոխանակումը և արդյունավետ համագործակցության եզրերի ձեռքբերումն էր
4. Լյուքսեմբուրգի հետ մշակութային ոլորտում համագործակցության հնարավոր ուղղությունների ուսումնասիրություն

- **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ**

1. 2020-2021 թթ. Մշակութային ուղիների եվրոպական ինստիտուտի փորձագետների ներգրավվածությամբ Հայաստանում մշակութային ուղիների քարտեզագրում
2. 2022-2023 թթ. կառավարման խորհրդի հերթական ոչ պաշտոնական հանդիպման կազմակերպում Հայաստանում
3. 2021-2022 թթ. Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի ղեկավար մարմնում Հայաստանի ներկայացուցչի թեկնածության առաջադրում:

Աստղիկ Մարաբյան

03.04.2019 թ.